

որպէս ազտ քրտինքն, որ երեւին: Եւ վառեն
 ժ՛՛՛ կանթեղս. եւ կանգնին ի պատարագ որ— 190
 չափ մատուռ կայ: Եւ զկնի պատարագաց անդ
 մնան զգիշերն՝ ամենայն ազգ ծոմապահ. ք. իսկ
 Հայք միայն խթին ի ձուկ, ի ձու եւ ի պանիր,
 զոր այլ ազգք տեսեալ ծիծաղին եւ նախատեն
 զմեզ: Զայս ամենայն տեսեալ Թուրքաց՝ դո— 195
 չեն. Ալլահ, ալլահ. եւ գնան ի տունս իւրեանց:

Բայց պատմեմ ձեզ սքանչելիս. որ յայսմ
 ամի եղեւ. զի լոյսն երկու ժամ յամեց եւ ոչ
 ելաւ. զոր Պարոնտէրն վարդապետօք, եպիս-
 կոպոսօք մեծի տարակուսի լեալ եւ արտա— 200
 սուախառն սգով. այլ հնար չիմացան քան զա-
 զաչեղն զԱստուած. եւ անկեալ ի դռան ի վե-
 րայ երեսաց իւրեանց ազօթեցին յերկար. էր
 անդ եւ մեծ վարդապետն Ամթայ տէր Բար-
 սեղ. աղաղակէին՝ Տէր ողորմեա մեզ, զի ի 205
 քեզ յուսացաք, եւ չիք այլ ոք բայց ի քէն.
 ծագեա զողորմութիւնս քո, զի եղաք նախա-
 տինք զբացեաց մերոց, ծաղր եւ այսն կատա-
 կանաց. մի երբեք ասացեն հեթանոսք թէ
 ո՞ւր է Աստուած նոցա. Օգնեա մեզ Աստուած 210
 Փրկիչ մեր, վասն մեծի փառաց անուան քո.
 Մի մեզ, Տէր, մի մեզ, այլ անուան քում
 սրբոյ: Եւ յառաջեաց Գրիգոր պարոնտէրն եւ
 ի խորոց սրտէ խոստացաւ Աստուծոյ ի ծածուկ
 ԲՈ՛ ծունր. եւ տէր Բարսեղն Ռ ծունր. եւ ապա 215
 ողորմածն Աստուած ողորմեցաւ եւ զթացաւ

204 յամթայ: — 206 ուսացաք: — 209 երբէք: